

ՆԻԱԿԱՐԱ

Մէր մը եթէ քու ուժովդ անցնի մարդու մը ներսէն
 Ու միշտ թափուի սըրտին մէջ, պիտի յղկէ այդ անձին
 Կարծրագոյն սիրտը անգամ, ինչպէս կ'ընես անվըհատ
 Դուն յղկելով, քերելով, յոխորտագոյն մասնիկներն

Հըպարտ ու ցից ժայռերուն, որ կը մերժեն խոնարհիլ
 Ուժիդ առջեւ տիրական: Այնպէս եւ սէրը մարդուն
 Ըլլալու է բռնական, հըպարտ ու սէգ, զօրաւոր
 Որ յղկւոյն վերջապէս մերժումներու սուր ծայրերն

Միրտը դառնայ փըխրուն հող, սէրն ալ ծաղկի այդ հողին: .
 Դուն վըճռական եւ անդուլ ոյժ մ'ունենաս որու դէմ
 Ոչ մէկ ժայռի կարծրութիւն, ոչ մէկ մերժում դիմանայ.

Ոյժ մը եւ սէր ուր այլեւս հըպարտութեան ոչ մէկ հետք
 Կրնայ ապրիլ ու տեսել: Այդ ոյժն ու սէրն ունի՞ս դուն
 Որ կարենայ արդ յղկել սիրտերն անգամ կարծրագոյն:

ԱՆԵԼ